

ՀԻՒՆ ԹԷ ՎԵՎ? (- Լ Վ ¹⁾)

(Ղ. Աղայեանցի՝ «Մի թեթեւ հրաժանգ մեր լեզուի ուղղագրութեան մասին» յօդու-
ծի առիթով. «Աղբիւր» 1888, № 12)

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆՅԻ

Մեր արդի գրականական լեզվի ոչ միայն քերականութիւնը, այլ և ուղղագրութիւնը ունի շատ կէտեր, որոնք դեռ հաստատ չիրք, որոշ գոր-
ծածութիւն չ'են ստացել. նոքա շատ անգամ կախված են լինում գրողի
կամքից, որը առանց իրան հաշիւ տալու գործ է ածում այս կամ այն քե-
րականական ձևը, այս կամ այն ուղղագրութիւնը. երբեմն մինչև անգամ
միևնոյն հեղինակի գրվածի մէջ կը գտնէք՝ միևնոյն դէպքը կրկնված ժա-
մանակ՝ մի ուրիշ քերականական ձևի գործածութիւնը, միևնոյն բառի հա-
մար մի նոր ուղղագրութիւն:

Այս տեսակ գրողի մասին խօսք անգամ չ'է կարող, ի հարկէ, լինել-
ալստեղ ընթերցողը տեսնում է լիակատար կամաւականութիւն և ակամաւ
զգում է զզվանք լեզվի հետ ալդպէս վարվողի դէմ: Իսկ ինչ վերաբերում
է այն տեսակ գրողներին, որոնք վիճելի ձևերից ընտրում են այս և ոչ
այն ձևը, վիճելի ուղղագրութիւնից ընտրում են այս և ոչ այն ուղղագ-
րութիւնը, ալդ տեսակներին բաժանելու է երեք դասի:

1) Մի քանիսը գրում են հմտաւորութեամբ, այսինքն՝ հետևելով մի չափո-
նի օրինակի:

2) Միւսները գործ են ածում այս կամ այն քերականական ձևը կամ
ուղղագրութիւնը ըստ «ովայրութեան», առանց մտածելու՝ թէ արդեօք զանա-
զան ձևերից կամ ուղղագրութիւններից ո՞րն է աւելի ուղիղը և ուրեմն
ընտրելագոյնը:

¹⁾ Այս յօդուածի մէջ պահանջուած է ընադրի ուղղագրութիւնը, իբր նմուշ և
ոչ իբր իրաւոյս ուրիշներին:

3) Կան և որոնք ~~գիտելիք~~ են գործածում այս և ոչ այն ձևը, այս և ոչ այն ուղղագրութիւնը, հիմնելով իրանց ընտրողութիւնը զանազան լեզվաբանական և այլ պատճառների վերալ:

Առաջին և երկրորդ դասակարգի մարդիկ միշտ գոյութիւն կ'ունենան, քանի որ գոյութիւն ունին երրորդ դասակարգի մարդիկ. իսկ երրորդ դասակարգի մարդիկ գոյութիւն կ'ունենան, քանի որ մեր արդի գրականական լեզուն գտնվում է իւր ալթման անհաստատ, անորոշ դրութեան մէջ: Հանել լեզուն իւր ալդ քառասական դրութիւնից, իստակել նորա լեզուական ու ոճը, կարգ ու կանոնի տակ զցել նորա քերականական ձևերը ու ուղղագրութիւնը՝ ահա այն բարի ցանկութիւնը, որ ամենքս պիտի ունենանք, ահա այն մեծ գործը, որը սպասում է իւր մեծ հեղինակին, Բայց ալդ մեծ խնդրի կատարումը լոկ ցանկութեան, կարծ ժամանակի և մէկ մարդու գործ չէ: Առանձին անձնաւորութիւններ, ճշմարիտ է, ունենում են շատ անգամ մեծ ազդեցութիւն լեզվի վերալ, իրանց հանճարի և գրքավածների գորութեամբ տալիս են ուղղութիւն կամ մի առանձին գոյն լեզվին և դառնում են օրինակ, որոնց հետևում է հասարակութիւնը և ալդ պիտով հանդիսանում են վերաւորողիչներ լեզվի, բայց ալդ հանճարեղ մարդիկը իրանցից չ'են ստեղծում մի նոր լեզու, ալ ըմբռնելով լեզվի քառսի մէջ կենդանի հոսանքը, առաջ են քաշում նորան, խտակում են նորա ճանապարհը, լաճացնում են նորա ասպարէզը, և այս դէպքում բնական է, որ գործը կը կրէ գործողի անձնաւորութեան, զարգացման, հպեացքների դրոյմը. բայց, կրկնում ենք, հանճարները լեզու չ'են ստեղծում. նոքա լեզվին զարկ, ուղղութիւն տվողներ են. լեզվի ստեղծողը ազգն է, նորա պահողը՝ ժողովուրդը, նորա կրթողը, մշակողը՝ ուսեալ և կրթեալ հասարակութիւնը: Թէ ինչ պալմանների, ինչ հանգամանքների ազդեցութեան ներքոյ է զարգանում, մշակում, կոկվում գրականական լեզուն, ալդ անշուշտ չափնի է ընթերցողներից շատերին, և ալստեղ տեղն էլ չ'է ալդ հարցի մտնրամասնութիւնների մէջ մտնելու. կը կրկենք ալն, ինչից որ սկսեցինք, քանի որ մեր լեզվի մշակութեան գործը կամքի, ճաշակի և կուր հետևողութեան վերալ կը լինի հիմնված, լեզուն երբէք կանոնաւորութիւն, միաձևութիւն չի ստանալ. հարկաւոր է լեզվի անկանոն երևութները խստութեամբ քննադատել, նորա վիճելի հարցերը կանոնաւոր և հիմնաւոր կերպով ուսումնասիրել և ապա ընտրել կամ առաջարկել գործածութեան համար ալն, որ օրինաւորն է և կանոնաւորը: Այդպէս վարվել լեզվի վիճելի հարցերի և երևութների վերաբերմամբ աւելի ևս պարտական են նոքա, որոնք կամալ թէ ակամալ ազդում են հասարակութեան վերալ իրանց հեղինակութեամբ, իրանց գրականական աշխատութիւններով. նոյն խստութեամբ պիտի վարվին ալսպիտի դէպքերում և մեր դասագրքերը և առաջին ընթերցանութեան գրքերը, որոնց ազդեցութիւնը մեծ է լինում նոր սկսող և օրինակի ազդեցութեանը շուտ ենթարկվող մանկութեան վերալ,

մինչդեռ և աղտեսակ գրքերում մենք տեսնում ենք շատ անգամ նույն քաօսը, նույն անբարեխիղճ, անհամոզում խառնաշփոթութիւնը:

Լեզուն այս քաօսական դրութեան մէջ լինելով, ուրախալի են անշուշտ այն բոլոր ջանքերը, որոնք ուղղվում են լեզուն աղտոնող դրութիւնից հանելու և նորան քերականական և ուղղագրական միաձևութիւն տալու: Այդ ուղղութեամբ արած ջանքերի և փորձերի շարքում առանձին ուշադրութեան արժանի է «Աղբիւր»-ի անցեալ տարվայ № 12-ի մէջ տպւած Ղ. Աղապեանցի լօղւածը՝ «Մի թեթև հրահանգ մեր լեզւի ուղղագրութեան մասին»: Թողնելով մի ուրիշ ժամանակի աղբիւր լօղւածի մէջ լարուցված ուրիշ հարցերի քննադատութիւնը, ես անմիջապէս դիմում եմ

թէ ի՞նչպէս պիտի գրենք Վ հնչիւնը՝ և ուլ թէ Վ ուլ, շատ հեշտ կը լինի վճռել, եթէ մէկ անգամից վճռենք՝ թէ ինչ տառ են տվել մեզ մեր նախնիքը աղբիւր հնչիւնը արտաբերելու համար: Առաջուց կարելի է ասել, որ ոչինչ կարիք չը կար մէկ հնչիւնի համար երկու տառ ստեղծել՝ մէկ Վ հնչիւնի համար երկու տառ և և Վ, և պատվիրել թէ՛ մէկը գրէք բառի ալս տեղում, միւսը՝ ալն տեղում: Ուրեմն աղբիւր տառերից որն է Վ հնչիւնի համար՝ և-ը թէ Վ-ը: Այդ հարցին հեշտ է պատասխանել, եթէ մի քիչ ուշադրութեամբ նայենք և տեսնենք՝ թէ ինչ տեղ են բռնում, ինչ դեր են կատարում աղբիւր տառերը մեր ալբրէնարանում: Յայտնի է թէ ինչ մեծ նշանակութիւն է ունեցել լուծաց ալբրէնը ս. Մեսրոպի անմահ գործի համար. աղբիւր ալբրէնարանի հետ համեմատելով մենք պարզ տեսնում ենք մեր և-ը նույն տեղը դրված, ինչտեղ որ դալիս է լուծաց ս (արտաս. = ֆրանս. u, գերմ. ü). իսկ եթէ մեր և-ի վարած պաշտօնը դիտենք, կը տեսնենք, որ նա և նույն դերն է կատարում, ինչ որ լուծաց ս. Յուծաց ս, ճշմարիտ է, անկախ հնչիւն է, բայց նա ունի նոյնպէս երկբարբառ կազմելու չափութիւն. մինչդեռ հայոց և գործ չէ ածվում իբրև անկախ հնչիւն, ունի միայն երկբարբառ կազմելու չափութիւնը: Ղ. Աղապեանցը ինքը իրաւացի նկատում է աղբիւր, ասելով՝ «սա (այսինքն և) մի անկախ հնչիւն չէ, այլ օժտեալ, օգտեալ հնչիւն»: Սթէ աղապէս է, ուրեմն աղբիւր տառը կատարում է ձայնաւորի դեր, եթէ ոչ՝ ինչպէս կարող է բաղաձայն տառը օժանդակ լինել, ապինքն օգնել երկբարբառ կազմելու:

և կազմում է հետեւեալ երկբարբառները՝

ա+ւ=լատ. au=ay (ռուս.)

և+ւ=eu (օյ)=eo

ի+ւ=ju=jo

ո+ւ=ou, ուս. y

Այս դէպքում և նույն դերն է կատարում, ինչ որ լուծաց ս, որը զընվելով նույն ձայնաւորների α (ա), ε (ե), ο (ո) հետ, նոյնպէս տալիս է նույն երկբարբառները՝

$$\begin{aligned} \alpha + \upsilon &= ay \\ \varepsilon + \upsilon &= ey \\ \circ + \upsilon &= y \end{aligned}$$

Յունարէնը չ'ունի միայն մեր եւ, որի փոխարէնը ունի յ, որը մենք չ'ունինք: Այս բոլոր դէպքերում, ինչպէս տեսնում ենք, - (v) ձայնաւոր է. բերենք օրինակներ՝

աւ-աւ (օր), մաւր (մօր), հաւր (հօր), քաղաքաւք (քաղաքօք) և այլն: Եւ-եւ (եօթ= euth= eoth), բարեւք (բարեօք= bareukh), չարեւք (չարեօք) և այլն:

իւ-իւ (iur, ior), յիւ (jugh), բանիւք (banjukh) և այլն:

ու-ու (uremn, yremn) ուստի (usti), ունիւմ (unim) և այլն:

Բայց ինչպէս է պատահել, որ նոյն երկբարբառներում, բացի ու-իւ, թէ հայերէնում և թէ լոնարէնում (նոյնպէս բացի յ+ւ) չառ ուրիշ դէպքերում արտասանվում է

$$\text{աւ-աւ} (\alpha + \upsilon) = \text{լատ. av (ալ)}$$

$$\text{եւ-եւ} (\varepsilon + \upsilon) = \text{ev (ել)}$$

$$\text{իւ-իւ} = \text{iv (իլ)}$$

Այդ հարցին պատասխանելու համար դիմենք կրկին վերի բերած աղիւսակին. այդ աղիւսակից մենք պարզ տեսնում ենք, թէ ինչպէս աւ- միանալով ու-ի, եւ-ի, իւ-ի հետ երկբարբառ կազմելու համար, կորցնում է իւր կալիւթիւնը, դառնալով լատ. օ. յ. իսկ այդ լ (յ, ու) հնչիւնը չալտնի է թէ ինչ աստիճան մօտ սահմանակից է v (B, վ) հնչիւնին. այն աստիճան այդ երկու հնչիւնները իրար մօտ են, որ լ (յ, ու) մնալով մենակ բառի վերջին կամ իրանից անմիջապէս չետող ձայնաւորի հանդիպելով սղվում է և դառնում v (վ), Նւ իրաւ՝ փորձեցէք աւ, եւ, իւ երկբարբառները արտասանել և ուշադրութեամբ ականջ դնել, երբ նոքա մնում են մենակ բառի վերջում կամ դրված են ձայնաւորի առաջ՝ դուք կը նկատէք այդ ու-ի (նոյնպէս լոնաց օ), որը ալօմ ու է դառնել, արտասանութեան մէջ v (վ) բաղաձայնի մասնակցութիւնը. սկզբում այդ բաղաձայնի մասնակցութիւնը անշուշտ աննշան է եղել, իսկ ժամանակով, երբ լիւդոնները իրանց կեանքի ընթացքում լառաջացրել են դանազան կրճատման, սղման և այլն օրէնքներ, այդ բաղաձայն v (վ)-ի մասնակցութիւնը ձայնաւոր լ (ու)-ի արտասանութեան մէջ աւելի և աւելի լսելի է սկսել լինել և վերջապէս այդ ու-ի նշանակութեամբ բոլորովին սղվել է v (վ): Այդ այդպէս եղել է ոչ միայն մեր լեզվում, այլ և ուրիշ հնդկաեւրոպական լիւդոններում. օր. լոնաց βασιλευς բառը՝ ευ երկբարբառի մէջ օ՝ քանի որ դրված է շ բաղաձայնի առաջից՝ պահում է իւր ձայնաւոր արտասանութիւնը. իսկ երբ հանդիպում է բաղաձայնի փոխարէն ձայնաւորի, օրինակ նեոսկանում, սղում է իւր օ ձայնաւորի ու (այս դէպքում) արտասանութիւնը մինչև վ-ի աստիճան և ապա բոլորովին կորչում. համաձայն լոնաց

լեզվի չատկութեան, որը շատ առաջուց ունենալով Վ բաղաձայնը (ը) չևտու կորցրել է. ուրեմն βασιλευς բառը կը տալ փոփոխման հետեւեալ աստիճանները՝

βασιλευς—ε
βασιλευρ—ως և ապա
βασιλε—ως

Այդ օ (որը այս դէպքում ասացինք արտասանւում է ա) մնալով մինակ բառի վերջին, եթէ ուշադրութեամբ ականջ դնենք, կը տեսնենք, որ նորա բաղաձայն մասը (վ) գալիս է (թէ և աւելի աննկատելի) փակելու ալդ հնչիւնի արտասանութիւնը:

Գաճք ալժմ աւ, էւ, էւ երկբարբառների երրորդ դիրքին, այսինքն ալն դէպքին, երբ նոքա իրանցից չևտու անմիջապէս հանդիպում են բաղաձայնի. սկզբում և երկար ժամանակ նոքա պահել են իրանց բնական, իստակ, երկբարբառ արտասանութիւնը. իսկ ժամանակով, լեզվի պատմութեան ալն ժամանակամիջոցում, երբ նոյն երկբարբառները վերոյիշեալ երկու դէպքերում ստացել են նոր արտասանութիւն (ալ, ել, իլ), ապա երրորդ դէպքում ալդ երկբարբառները ինչտեղ որ կարողացել են հնչիւնների ալդ կովում նվաճել և պահպանել իրանց սկզբնական արտասանութիւնը, ալն է աւ=au, էւ=eu, էւ=iu, ալնտեղ ալդ արտասանութիւնը քարացել մնացել է, իսկ ինչտեղ որ չեն կարողացել պահպանել ալդ արտասանութիւնը, ենթարկվել են լեզվի նոր պատմութեան ոչաւ անխնայ օրէնքին: Այդ երկբարբառներից էւ (ю) միայն տարել է կատարեալ չաղթանակը և պահել է իւր երկբարբառ յս (ю) արտասանութիւնը բաղաձայնների առաջ, օր. իւր, բանիւք, իւղ, և ալն. իսկ մնացեալ երկուսը՝ աւ և էւ, երկար ժամանակ մրցելով, լեզվի նոր պատմութեան մէջ կորցնում են իրանց աւի ձայնաւոր արտասանութիւնը: Այդ մրցումը, ալդ հնչիւնների կովը շատ կենդանի կերպով նկատում է մեզ լատինական Claudius բառը. կլասիկական լատիներէնում դեռ ալդ բառին ժամանակակից Clodius բառը, որը անշուշտ նոյնն է ինչ որ Claudius, միայն a+u=օ. գուցէ եթէ և մեր օ բառը ժամանակին չը հաստատուէր իւր ալդ արտասանութեան մէջ (ա+u=օ), ալժմ արտասանւում կը լինէր՝ աւ (այսինքն՝ ալք) և ոչ օր, հաւր և ոչ հօր և ալն. խօ տեսնում ենք նոր ժամանակներում Augustus դառած Августъ, Aurelius—Аврелий, Ев' ֆա'պո—Европа (այսինքն Եվրոպա) և ալն:

Մեր ասածների վերալ հիմնվելով կարող են առաջարկել մեզ հետեւեալ հարցը՝ հարկաւոր չէ՞ արդեօք աւ, էւ, էւ երկբարբառների մէջ սղլած աւ (ս, ք, ու) գրել վով, քանի որ սղլած աւի համար կամ առհասարակ Վ հնչիւնի համար մեր նախնիքը ալել են մեզ Վ տառը: Այդ հարցին ես կը պատասխանեմ՝ ոչ. և ճշմարիտ, ինչ կարիք կալ, քանի որ ալդ աւի կատարած դերը աւ, էւ, էւ երկբարբառների մէջ հատուտ է, որոշ և պարզ:

քանի որ մէկ անգամից ընդմիջու հաստատ գիտենք, թէ ինչպէս են արտասանվում աւ, եւ, իւ երկբարբառները։ Այն ժամանակ, երբ դեռ տարակուսանքի տեղիք կարող էր լինել, մեր նախնիքը գործ էին ածում ' նշանը, զնկելով նորան աւ, եւ, իւ երկբարբառների աւի վերալից՝ ա'ւ, ե'ւ ի'ւ, դորանով աւի սղումը և նորա վարտասանութիւնը նշանակելով իսկ այժմ, երբ օրինակ փոքր գործ գրվում է ֆոֆոֆ, ոչինչ հարկաւորութիւն չը կայ եզակի գործ. գրել ֆոֆոֆ, քանի որ ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ եթէ լինէր քաղաքօ կը գրէինք քաղաքօ. ո՞վ կը կարդայ ֆֆֆֆֆֆֆ բառը ազոսներ, եթէ ' նշանը չը գնենք կամ վ չը գրենք։

Ծանոթ. 1. ա, ե, ի—յետոյ գրվում է ի բարդ բառերում, երբ այդ ձայնա-
ւորներին հետևում է ի-ով սկսվող բարդումթիւնը, օրինակ՝ զօրավար, կառավար
և այլն:

Ծանոթ. 2. Ի վերջացած բառերը, զօր. հաշիւ, Թիւ, կռիւ, աղնիւ և այլն, որոնք հորովմելիս կորցնում են իբանց է, շատերը գրում են՝ Թաով, կռով, հաշեց, պատահան, աղնահան և այլն, է հարկէ այն հիման վերայ Թէ ինչպէս՝ պարեսպ—պարսպի, գիր—գրի և այլն բառերում ին կորչում է, այնպէս և կորչում է եւ վերջացած բառերում, ուրեմն մնում է —ը մինակ, որ և դրվում է միւս հորովներում և ամանցական բառերում։ Այդպէս մտածում և գրում էէ և ես առաջ, բայց այժմ այդ բառ կեկոյթիէն հիմնաւոր ուղղագրութիւնը ես անհիմն եմ գտնում. պատճառը շատ տարզ է. — ձայնաւոր ստա է. նորա նշանակութիւնը, յատկութիւնը և գործածութեան տեղը մենք գիտենք, գիտենք որ նա առանձին ինքնուրոյն գործածութիւն չ'ունի, այլ գործ է անելում իբրեւ օժանդակ ձայնաւոր =, ե, է, ու է կես միանալով կերպարաւորներ կազմելու համար. գիտենք նոյնպէս, որ նա այդ կերպարաւորներում յայտնի տեղերում և դէպքերում սղվում է դառնում չ բաղաձայն հնչիւն, բայց այդ էն նշանակում Թէ նա մենակ մնացած ժամանակ, երբ ես կանգնանում եմ իբրեւ անկախ հնչիւն, նոյնպէս պետի սղվի. ո՛չ առաջինը — մենակ, ինքնուրոյն, անկախ գործածութիւն չ'ունի հայերէնում, երկրորդ դա առանձին առած ու էէ =առ ա, այլ ա-է=յուն. օ) Փր. ա, որը իբրեւ ինքնուրոյն ձայնաւոր սղվում չ'է, իսկ եթէ կերպարաւորներում նա սղվում է, որովհետեւ այնտեղ այդ — (օ) արտասանվում է ա և այդ սղումը չ'է նշանագրվում լուով. մենք այդ — մենակ մնացած ժամանակը պետի նշանագրենք լ-ով, յայտնելով դորանով Թէ այդ — դեռ իր կերպարաւոր կազմող միւս մասը (այս դէպքում խլ) կորցնելուց առաջ արտասանվում էր սուղ լ օրինակ՝ գրելով սեռական. ի-լէ մենք դորանով յայտնում ենք այն, ինչ որ անհնում ենք ուղղականում, յայտնում ենք Թէ ուղղականում ի-ն բառէ մէջ ի-է հեռ գրված — սղվել է լ Թէ, ինչպէս վերեւ ասացինք, հարկաւորութիւն չը կայ այդ նշանակելու. մինչդեռ գրելով սեռականում — (կռ-է) և արտասանելով լ, դորանով անմիջապէս հիւրքում ենք —է ձայնաւոր լինելը։ Ուրեմն ընդունելով —ը ձայնաւոր հնչիւն—յուն. օ) Փր. ա, վերոյիշեալ բառերը՝ է կորցրած ժամանակ լ հնչիւնը պետի գրենք լ առաւել, այսինքն այն միակ տառով, որը արված է մեզ լ հնչիւնի անպայման արտայայտութեան համար. ուրեմն գրելու է՝ ի-ն—ի-լէ—ի-լ-է-լ, ի-ն—ի-լէ—ի-լ-է-լ, —է-լէ—ա-լէ-լ—ա-լէ-լ—է-լէ-լ և այլն. լ-ով նոյնպէս պետի գրվին. օտար բառերը, ինչպէս Ռիբիա, Դիան և այլն

Գանձը աչքով ու երկբարբառուն, որի մասին մինչև աչքով դեռ ոչինչ

Մի խառնաշփոթ հասանում է ձայն հեռու-ից.

(Շեղեր. Կասսանդրա. Թարգ. Ս. Նաղաբեանց):

Այստեղ տողի չափից երևում է որ $\alpha = \gamma$. բայց եթէ տողի չափը պահանջէր Վ միթէ նոյնպէս պիտի գրէինք α , սպասելով որ կարդացողը տողի վանկերը համարէ, որ իմանալ թէ ալս տեղում α արտասանվում է Վ. իսկ եթէ ալդպիսի դէպք պատահէ արձակ շարադրութիւնում, ալն ժամանակ կարդացողը ինչպէս պիտի լմանալ թէ $\alpha = \gamma$ է և ոչ Վ. կրկնում ենք՝ տառերը տրված են մեզ հնչիւնների արտասանութիւնը նշանագրելու լարմարութեան համար. ինչո՞ւ չ'օգտվենք, առաւել որ ալդ կարող ենք առնել առանց լեզափոխութեան, առանց նորամուծութեան, ալ մեզ տրված պատրաստ նիւթից. մեր նախնիքը, որոնց հեղինակութիւնը շատերի համար անխախտելի է, աւելին էին անում. օր. $\alpha = \gamma$ արտասանութիւնը նշանագրելու համար նոքա առանց ալ և ալի ընդունեցին եւրոպական օտաւը, $\alpha = \gamma$ արտասանութեան համար հնարեցին՝ նշանը, և ալն. մենք խօսք ալս դէպքում մի նոր տառ չենք հնարում, ալ նոյն մեր նախնիքների ալքբէնարանից առնում ենք Վ տառը Վ հնչիւնի նշանագրութեան համար: Բայց մեզ կ'ասեն թէ՝ ինչո՞ւ չը նշանագրենք ալդ α -ի սղումը α -ով ալ Վ-ով: Մենք ալդ հարցին գեռ առաջուց պատասխանել ենք՝ որովհետեւ Վ ձայնաւոր տառ է և ոչ բաղաձայն, եթէ ալդ ձայնաւորը երբեմն սղվում է բաղաձայն Վ, ալդ լինում է լատնի դէպքերում, լատնի պատճառներով, ալն է՝ α , ϵ , ι , α^1 -ից լետու: Եթէ ալդ դէպքերից ենթադրենք թէ α բաղաձայն γ (B) տառ է, ալն ժամանակ նոյն α , ϵ , ι , α տառերի հետ դնելով $\circ$ ($\alpha + \circ$), $\epsilon \circ$ ($\epsilon + \circ$), $\alpha \circ$ ($\alpha + \circ$) ստանալը անմեկնելի կը լինի. Նոյնպէս անհասկանալի կը լինի մեր նախնիքների տրանսլիպիան՝ Սդպտոս, Կպրոս, Կլրոս, Կլրակէ և ալն: Ուրեմն եթէ մեր նախնիքների վկայութիւնն է հարկաւոր α -ի ձայնաւոր լինելը ապացուցանելու համար, դորանից էլ պարզ թնչ օրինակներ են պէտք, քանի որ մեր նախնիքը կարող էին գրել և գրում էլ էին՝ Սդիպտոս, Կիպրոս, Կիւրոս, Կիւրակէ ²⁾ և ալն: Ուրեմն եթէ մեր նախնիքը ալսպէս պարզօրէն լատնում են մեզ α -ի ձայնաւոր լինելը, ապա թնչ իրաւունք ունինք մենք ալդ մեզ տրված ձայնաւորը բաղաձայն Վ-ի տեղ ընդունել և գրել. ինչո՞ւ նոքա չ'էին գրում՝ Ե-ալս, Ե-

¹⁾ α -ից յետոյ α -ը Վ-ի օղվելով կամ առհասարակ Վ-ի կարգաւորութիւն լինելով գրվում է Վ, որովհետեւ α (առաջ. γ) ձայնի կամար առանձին տառ չ'ունենալով $\alpha = \gamma$ էլ չէր $\alpha = \gamma$.

²⁾ Գրում էին նոյնպէս՝ Սդպտոս, Կիպրոս, Կիւրոս, Կիւրակէ. այս վերջին գրութիւնը յայտնում է անշուշտ օ-ի այն արտասանութիւնը, որը այժմ ստացել է ալդ տառը յունարէնում. այժմեան յունարէնում նա հնչում է ϵ , որ ֆրանսիացիք գրում են γ , անվանելով նորան յունական $\epsilon = \gamma$ grecque.

կուրի և ալէն, ալ թուական, կուրի, քանի որ նոյն — արդէն ուղղականում պատրաստովէն դառել է Վ՝ թիւ==թիւ, կուր==կուր. ուրեմն այս դէպքումն էլ վճռվում է՝ չէին — գրել՝ հաստատելով դորանով թէ —ը Վ չէ:

—ի Վ արտասանելու և Վ-ի տեղ գրելու վերաբերիալ իւր ամենամեծ ապացոյցը Աղալեանցը հիմնում է ի վերջացած անունների սեռականի ուղղագրութեան վերաբ. «Մեր նպատակի համար, ասում է նա, ամենից ուղղագրութեան արժանին ալն է, որ ի վերջաւորած անունների սեռականը չինել են —ոյ և ոչ Վոյ. ինչպէս գինւոյ, գօտւոյ, տարւոյ, գործի==գործւոյ, գործւոյ, գործւոյք, և ալն»։ Այս տեսակ բառերում արդարեւ ի փոխվում է մնացեալ հոլովներում ե-ի¹⁾, իսկ սեռականում —իւ. Նս կարծում եմ թէ ալստեղ — նոյն դերն է կատարում, ինչ որ չունաց համապատասխան ս, ուրը, ինչպէս վերև նկատեցինք, ժամանակով ստանում է ի արտասանութիւն. նոյնպէս և մեր — այս դէպքում շատ հաւանական է որ սկզբումը փոխարինելով ուղղականի ի՝ շատ մօտ է եղել իւր արտասանութեամբը ալդ ե-ին և ալդ ալն աստիճան, որ գրում են եղել նոյնպէս և որդիոց, հոռմայեցիոց, մանկտիոյ, լոսկիոյ²⁾ և ալն. ալն աստիճան —ը փոխարինում է եղած ի, որ մինչև անգամ տեսնում ենք հետեւեալ ուղղագրութիւնը՝ օր—որդ, ար—անամ, ար—ութիւն, հասիս կամ հասս և ալն, որ կարդում ենք օրիորդ, արիանամ, արիութիւն, հիւսիս և ալն։ «Նթէ մեր նախնիք, շարունակում է Աղալեանցը, ասել են Գոր—ոյ, ինչո՞ւ մենք չենք կարող ասել՝ տարւալ, ալ անպատճառ պէտք է ասենք՝ տարուալ»։ Շատ հասկանալի է թէ ինչո՞ւ. դիցուք այս օրինակում հին ուղղագրութեան — մի քիչ գալթազդեցնում է (տարւոյ), բաց եթէ ուղղութիւն դարձնենք, կը տեսնենք որ ոչ միայն Գորի, ալ և առհասարակ Ժամանակ ցոյց տվող բառերը սեռականում բացի իրանց հասարակ վերջաւորութիւնից ունին և Վոյ կամ Վոն (ըստ ուրիշների ուսոյ կամ ուսն) վերջաւորութիւնը. լաւ. եթէ Գորվոյ գրենք Գորւոյ առնելով —ը հին Գորւոյ ձևից, ապա, ժամանակվալ, ամսվալ, շաբաթվալ³⁾ և ալն, բառերի Վ ինչ տեղից առնենք. բանը ալն է որ ալդ տեսակ անունները ունին սեռականի համար երկու վերջաւորութիւն, որոնցից մէկն է ալդ Վոյ կամ Վոն. օրինակ՝ ժամանակ—ժամանակի և ժամանակվալ, ամիս—

1) Համեմ. յունար. անունները, որոնց արմատը ի է վերջանում, որոնք (բացի Հայց. և Աղ.) այդ և փոխում են զ. քօւս—զ, քօւթ—աշ, քօւս և այլն:

2) Արդի Հայերէնում իս ընդորովին անհետանում է՝ եկեղեցի—եկեղեցու—եկեղեցով, որդի—որդու—որդով և այլն:

3) Նոյնպէս՝ ժամանակվան, ամսվան, շաբաթվան: Սեռականի այդ Վոյ կամ Վոն վերջաւորութեան նոյնպէս և կրաւորական բայերի Վ-ի մասին մենք կը խօսենք մէ. ուրիշ ժամանակի

ամսի և ամսվա՛յ կամ ամսվան, նոյնպէս ուրեմն՝ տարի—տարու և տարվա՛յ կամ տարվան:

Վ-ի տեղ — գրելու համար Աղապեանցը բերում է վերջապէս և հետեւեալ ապացոյցը. «Եթէ նրանք (մեր նախնիքը) կ'ասեն՝ գործուոյ, գործուոյ, ինչո՞ւ մենք էլ չ'ասենք՝ գործւած, գործւեց, գործւող»: Շատ հասկանալի է թէ ինչու չը պիտի ասենք. ինչո՞ւ գործւած, գործւեց, գործւող բաբերի ուղղագրութիւնը հիմնենք գոյական անունի սեռականի (գործւոյ) ուղղագրութեան վերաջ և չը հիմնենք նոյն մեր նախնիքների մեզ աւանդած՝ ընթերցող-աւած, խնդրող-աւած, լողող-աւած և այլն: Եթէ մեր նախնիքների ուղղագրութիւնը աղբիւրն աշխուլի և օրինակելի է, ինչ իրաւունք ունինք հակառակ նոյն հեղինակութեան գրելու՝ գործւած, ընթերցւած, լողւած, ալիւնքն՝ հիմնել կրաւորական բաբերի ուղղագրութիւնը է վերջացած անունների սեռականի (ւոյ) վերջաւորութեան վերաջ, քանի որ նոյն մեր նախնիքը տալիս են մեզ մեր ալփման կրաւորական բաբերի ուղղագրութիւնը ու-ով (ալփմ սղված վ)՝ ընթերցուած, գործուած և այլն: Իսկ ինչո՞ւ մենք չ'ենք գրում՝ գործուած, գործուեց և այլն, դորա մասին ես արդէն խօսեցի վերև և ասացի թէ՛ Վ հնչիւնի համար մենք ունինք և Վ տառը, իսկ ու պահում ենք ձայնաւոր Ա-ի (ուա. չ) համար:

Բոլոր մեր վերև ասածներից հետեւեալ եզրակացութիւնները կարելի է անել.

1. — ձայնաւոր տառ է, թէև անկախ, ինքնուրոյն գործածութիւն չ'ունի. դա մի օժանդակ հնչիւն է, որ օգնում է ա, ե, ի, ու երկբարբառներ կաղմելու. այդ կաղմութեան մէջ նա՛ ու հնչելով՝ լատնի տեղերում սղվում է այդ պատճառով Վ-ի, բայց պահում է իւր այդ գրութիւնը աւանդաբար, առաւել որ հնչիւնների խառնաշփոթութիւն չէ լառաջանում. միայն ու-ից փետոյ Վ հնչիւնը գրվում է ու, որովհետև

2. ու ունի միայն ձայնաւոր, այն է միաձայն և ոչ երկբարբառ հընչիւն: Այդ ու-ից սղված

3. կամ ալլ դէպքերից լառաջացած Վ հնչիւնը մենք գրում ենք Վ տառով, որը աղբիւսով մնում է միակ տառ Վ հնչիւնի համար. բարդ բառերում նա գրվում է ա, ե, է ձայնաւորներից փետոյ փոխանակ սղորական ւ:

Այս բոլորը ես գրեցի ոչ իբրև հրահանգ ուրիշների համար, ալ իմ սեպական կարծիքը և հպեացքը լատնելու համար այդ կարևոր հարցի մասին. արդ ես հարկաւոր համարեցի անել առաւել ես այն պատճառով, որ Աղապեանցը կարծում է թէ ես գրում եմ Վ ոչ թէ գիտակցաբար ընտրելով այդ ուղղագրութիւնը, ալ միայն ըստ սովորութեան: Այժմ իմ վերև առաջարկած լողվածից ընթերցողը կը տեսնէ, որ իմ ընտրած ուղղագրութիւնը հիմնած չէ սովորութեան վերաջ, ալ կաղմում է իմ համոզումը: